

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-176 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 49-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «եւ տեխնիկական պայմանների» բառերը փոխարինել «տեխնիկական պայմանների եւ հաճախորդի անձնական տվյալների» բառերով:

2) 2.1 մասից հետո լրացնել նոր 2.2 մասով.

«2.2. Օպերատորը կամ ծառայություններ մատուցողն իրավասու է Կարգավորողի կողմից սահմանված կարգով բացահայտել իր հաճախորդի կողմից օգտագործվող ծառայության վայրի վերաբերյալ տեղեկությունները (հաճախորդի տեղորոշում) եւ հաճախորդի անձնական տվյալները՝ դեպի արտակարգ պատահարների արագ արձագանքման ծառայության 112 (911), հրշեջ ծառայության 101, Հայաստանի Հանրապետության ոստիկանության 102 եւ շտապօգնության 103 համարներին կատարվող կանչերի(հաղորդումների) դեպքում: Կարգավորողը սահմանում է սույն մասով նախատեսված կարգը, այդ թվում՝ տեղորոշման համակարգի գործարկման պայմանները, տեղորոշման բացահայտման ժամկետներն ու համակարգի տեխնիկական նախագծի համաձայնեցմանը ներկայացվող պահանջները՝ նախապես համաձայնեցնելով իրավասու մարմնի հետ: Տեղորոշման բացահայտման ժամկետն սկսվում է կատարվող կանչերի(հաղորդումների) պահից և տևում է մինչև անհրաժեշտ օգնության ցուցաբերումը»:

3) 3-րդ մասի «եւ 2.1-ին» բառերը փոխարինել «, 2.1-ին եւ 2.2-րդ» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Փաստաթղթային կոդ՝ Կ-279-02.03.2018,31.07.2018-SՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Բաղդասարյան Զեմմա	Նախագծի 2-րդ հոդված	Տեղորոշման համակարգ ներդնել նաև դեպի հրշեջ ծառայության 101 և վթարակարգավարական ծառայության 104 համարներին կատարվող կանչերի դեպքում:	<p>Ընդունվել է մասնակի:</p> <p>Նախագծում</p> <p>ավելացվել է հրշեջ ծառայության 101 հեռախոսահամարը:</p> <p>Ինչ վերաբերվում է վթարակարգավարական ծառայության 104 համարին, ապա գազի ենթակառուցվածքները ունենում են ֆիզիկական հասցեներ և կյանքին կամ առողջությանը սպառնացող վտանգի դեպքում զանգերը կատարվում են 103 կամ 911 հեռախոսահամարներին:</p>	<p>Ընդունվել է մասնակի:</p>

2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	<p>1. «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում «2005» թվից առաջ նշված «Հայաստանի Հանրապետության» բառերն անհրաժեշտ է հանել՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի պահանջները:</p> <p>2. Նախագծով կատարվող լրացումը և փոփոխություններն անհրաժեշտ է նախատեսել մեկ հոդվածով՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ հիշյալ լրացումն ու փոփոխությունները կատարվում են «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի միայն 49-րդ հոդվածում:</p>	<p>Ընդունվել է:</p> <p>Կատարվել է համապատասխան փոփոխություն</p>	<p>Ընդունվել է:</p>
----	-------------------	---------------------	--	---	---------------------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~-2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-176 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 49-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «~~և~~ տեխնիկական պայմանների» բառերը փոխարինել — «, տեխնիկական պայմանների ~~և~~ հաճախորդի անձնական տվյալների» բառերով:

~~Հոդված 2. Օրենքի 49-րդ հոդվածում)~~ 2.1 մասից հետո լրացնել ~~հետևյալ բովանդակությամբ~~ 2.2 մասով.

«2.2. Օպերատորը կամ ծառայություններ մատուցողն իրավասու է Կարգավորողի կողմից սահմանված կարգով բացահայտել իր հաճախորդի կողմից օգտագործվող ծառայության վայրի վերաբերյալ տեղեկությունները (հաճախորդի տեղորոշում) ~~և~~ ~~և~~ հաճախորդի անձնական տվյալները՝ դեպի արտակարգ պատահարների արագ արձագանքման ծառայության 112 (911), ~~և~~ ~~և~~ հրշեջ ծառայության 101, Հայաստանի Հանրապետության ոստիկանության 102 ~~և~~ ~~և~~ շտապօգնության 103 համարներին կատարվող կանչերի(հաղորդումների) դեպքում: Կարգավորողը ~~հաստատում~~ ~~սահմանում~~ է սույն կետով մասով նախատեսված կարգը, այդ թվում՝ տեղորոշման համակարգի գործարկման պայմանները, տեղորոշման բացահայտման ժամկետներն ու համակարգի տեխնիկական նախագծի համաձայնեցմանը ներկայացվող պահանջները՝ նախապես համաձայնեցնելով իրավասու մարմնի հետ»:

~~Հոդված~~ Տեղորոշման բացահայտման ժամկետն սկսվում է կատարվող կանչերի(հաղորդումների) պահից և տևում է մինչև անհրաժեշտ օգնության ցուցաբերումը»:

3. ~~Օրենքի 49-րդ հոդվածի)~~ 3-րդ մասի «~~և~~ 2.1-ին» բառերը փոխարինել «, 2.1-~~և~~ ~~ին~~ ~~և~~ 2.2 մասերի-րդ» բառերով:

Հոդված 4.2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:—:

~~«Կարգավորություն»~~